ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ III, № 2, 1950 Биол. и сельхоз. науки

Ս. Դ. Նարոյան

ԵՐԵՎԱՆԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՀՈՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒՄԸ

ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Հոնը պատկանում է այն կուլտուրաների շարքին, որոնք լրիվ չեն ուսումնասիրված. թեև մի շարք դիտնականներ, օրինակ՝ Հ. Ֆ. Բունիաթյանը, Գ. Դ. Յարոշենկոն, Մ. Գ. Դասպարյանը [1], Ա. Ա. Գրոսս-Դեյմը [2], Յա. Ս. Մեղվեկը [3], Վ. Ա. Սլորոդյանիկը [4], Ռ. Վեսոշուեյնը [5], Գ. Վ. Ֆրուսեիչը [6], Ֆ. Վ. Ցիբելիտինովը [7], Ն. Զ. Ռումիկովը [8], Ն. Դ. Ուսինչեը [9] և ուրիշները զբաղվել են այս կուլտուրայով։

Հոնի պտուղներից պատրաստում են պաստաներ, քաղցրավենիներ, ոյուրեն, պաստեղներ, շիրիներ, խմիչքներ, օղի, զովացուցիչ ջրեր և այլն։ Հայաստանի հյուսիսային շրջանների ազդարնակությունը հոնը օգտագործում է թարմ և չորացրած վիճակում։ Չորացրած հոնից պատրաստվում է ընտիր ոսպաս։

Հոնի տերևները պարունակում են ազդիչ (դարագիչ) նյութ մոտ 12—14 % [6], որն օգտագործվում է կաշեզործության մեջ։ Հոնի փայտանյութը պինդ և ծանր է և լավ հղկվելու ընդունակության շնորհիվ օգտագործվում է փայտի զարդարանքների համար։ Ըստ Դալենի [8] առաջներում հոնի պտուղներն օգտագործել են վերքեր բուժելու համար։ Սալերնայի [8] ժամանակվա բժշկությունը հաստատում է նույնը։ Ըստ Բոխենի [8] հոնից պատրաստված պաստաներով բուժում էին տենդը։ Հոնից պատրաստված շիրիը և նրա կորիզն օգտագործվում են փորլուծի դեմ։ Համաշխարհային առաջին պատերազմի ժամանակ հոնն օգտագործվել է որպես C վիտամինով հարուստ պտուղ—ընդեղեն հիվանդության դեմ [2]։

Ըստ ակադեմիկոս Ա. Մ. Ժուկովսկու, հոնի հայրենիքը Առաջավոր Ասիան է և Կովկասը։ Հոնը վայրի դրությամբ տարածված է Կենտրոնական և Հարավ-Արևմտյան Եվրոպայում, Ուկրաինայում, Ղրիմում, Կովկասի և Անդրկովկասի անտառներում։ Հոնը Հայաստանում տարածված է հիմնականում Գորիսի, Ղափանի, Շամշադինի, Ալավերդու, ինչպես նաև Կիրովականի, Դիլիջանի, Մեղրու և այլ շրջաններում։

Հայաստանում պտղաբուծության մեջ կուլտուրական մշակության պայմաններում հոնը կազմում է պտղատու ծառերի 0,8 %։ Այս նշանակում է, որ հոնի վրա հարկ եղած ուշադրությունը չի դարձված։ 1945—1946 թվի պտղաբուծության հաշվառման տվյալներով Հայաստանի տարբեր շրջանների այգիներում մշակության մեջ եղած հոնի տարածվածությունն ունի հետևյալ պատկերը (աղյուսակ 1)։

Ինչպես երևում է աղյուսակից, հոնի ծառերի տարածման տեսակետից առաջին տեղը բռնում են Գորիսի և Ալավերդու, ապա Շամշադինի

ու Նոյեմբերյանի շրջանները։ Ծառերի քանակի տեսակարար կշռով առաջին տեղն է բռնում Շամշադինի (6,8 %) շրջանը, հետո Դորիսի։

Աղյուսակ 1

Շրջաններ	Ծառերի տարածումը բոլոր շրջանների՝ առկոսներով	Տվյալ շրջանի պտղատու ծառերի որ % է կազմում հոնը
1. Դորիս	32	6,2
2. Ալավերդի	22,5	2,7
3. Նոյեմբերյան	12,1	4,3
4. Իջևան	8,7	4,3
5. Մեղրի	4,1	0,7
6. Շամշադին	16,2	6,8
7. Ղափան	3,1	1,3
8. Կիրովական	0,2	աննշան
9. Աշտարակ	0,2	,,
10. Երևան	0,1	,,
11. Բերիա	0,1	,,
12. Կոտայք	0,1	,,
13. Արտաշատ	աննշան	,,
14. Դիլիջան	,,	,,
15. Մեխրան	,,	,,
16. Էջմիածին	,,	,,

Հոնը պատկանում է հոնազգիների ընտանիքին [5], սա ինքնափոշոտվող, դանդաղ աճող, երկարակյաց ծառ է կամ թուփ։ Ճյուղերը կանաչ են կամ մուգ մոխրագույն։ Տերևները պարզ են, հարթեզր, երկարավուն ձվաձև կամ էլիպսաձև, հետզհետե նեղացող գագաթով, ծայրին կարճ սրվածությամբ, վերին երեսը մուգ կանաչ է, ստակից ստորինը՝ բաց կանաչ, դասավորված են հակադիր, աշնանը թափվում են։ Ծաղկաբույլը կիսահովանոց է 9—22 ծաղիկներով, պատված չորս հատ համեմատաբար մեծ թերթերից կազմված ծածկոցով (նկ. 1)։ Ծաղիկն ունի քառատամ բաժակ, չորս դեղին թերթերից կազմված պսակ, չորս առէջ և մեկ վարսանդ (նկ. 1—1, 2, 3)։ Ծաղիկներն առաջանում են նույն տարվա, երկամյա և բազմամյա ճյուղերի վրա։

Հոնը համեմատաբար մեծ բերք է տալիս. նրան նույնպես հատուկ է պարբերական բերքատվությունը, բայց այնքան ուժեղ արտահայտված, որքան մյուս կորիզավորների մոտ։ Եթե նրա վերաբերմամբ համապատասխան ագրոտեխնիկա կիրառվի, ապա նա անկասկած ավելի կայուն բերք կտա։ Տասնհինգից—քսան տարեկան հասակ ունեցող հոնի ծառերը մեր պայմաններում տալիս են 12—15, իսկ ավելի մեծ հասակ և փարթամ

պտուկ ունեցողները՝ 20—30 կիլոգրամ բերք։ Լավ մշակության դեպքում փարթամ ծառը կարող է տալ 100—120 կիլոգրամ բերք [4]։

Նկ. 1. Հոնի ծաղկի և պտղի կտրվածքը։

Հոնը ցրտադիմացկուն և ամենից վաղ ծաղկող է։ Այդ պատճառով տուժում է վաղ գարնանային ցրտերից, ինչպես, օրինակ, 1949 թ. Երևանի պայմաններում։ Զմռան ցրտերին բավական լավ դիմանում է։ Պտղի ձևը տարբեր է՝ երկարավուն, ձվաձև, տանձաձև, շշաձև, գլանաձև, տակառաձև և այլն։ Պտղի գույնը լինում է կարմիր, բաց կարմիր, մուգ կարմիր (սևին տվող), դեղին։ Պտղի կշիռը՝ 1—5 գրամ։ Պտղի քիմիական կազմը ըստ գրական տվյալների հետևյալն է.



Նկ. 2. Տակառաձև հոն։

Չոր նյութ	16.30—17,09 %
Ընդհանուր շաքար . . .	6,88— 9,46 »
Խնձորաթթու	2,10— 2,89 »
Դարաղանյութեր . . .	12,00—14,00 »
Թաղանթանյութեր . . .	0,85 »
Վիտամիններ	28—68, մ/գ %

Ի նկատի ունենալով հոնի կարևորությունը ժողովրդական տնտեսության մեջ և դաշտապաշտպան տնտառաշերտերում, մենք անհրաժեշտ համարեցինք ուսումնասիրել հոնի այն փոքրաքանակ ծառերը, որոնք աճում են Երևան քաղաքում ու նրա արվարձաններում և դրա հիման վրա պարզել նրա լայն տարածման ուղիները Արարատյան դաշտավայրում։ Մենք այսպես հարկ ենք համարում բերել մեր հետազոտության տվյալները։ Որոշ տվյալներ բերում ենք նաև Հայաստանի մյուս շրջաններում աճող հոնների մասին։ Ուսումնասիրությունները ցույց տվին, որ Երևանում և նրա շրջակայքում կան բուն պտուղների ձևի հետևյալ տիպի հոններ՝ տակառաձև, տանձաձև, գլանաձև, շլամաձև։ Ստորև տալիս ենք դրանց նկարագրությունը։



Նկ. 3. Տանձաձև հոն։

Տակառաձև հոն (նկ. 2). — Աճում է Նորքի բարձունքի հյուսիս-արևմտյան թեքության վրա։ Ծառերը քսան տարեկան են։ Ծառի բարձությունը և պսակի լայնությունը 2-ական մետր է, պսակը բաժակաձև, ճյուղերի գույնը դորշ-մոխրագույն։ Նույն տարվա աճող ճյուղերը կանաչ են։ Պտուղը տակառաձև է, երկու ծայրերը սեղմված են հարթ գագաթներով, նրա մեջտեղը ամենալայն տեղն է։ Պտուղը կարմիր է, երկարությունը 1,48 սմ, լայնությունը 1,35 սմ, միջին կշիռը 2,83 գր, որից կորիզինը՝ 0,28 գր։ Պտղի չոր նյութը կազմում է 16,93 %, ընդհանուր շաքարը 8,04 %, խնձորաթթուն 2,63 %։ Կորիզը կարճ է և հաստ, գագաթի կողմը բութ, կթի կողմն անմիջապես նեղանում է և վերջանում քիչ սրվածքով։ Կորիզի երկարությունը՝ 1,0 սմ, լայնությունը՝ 0,54 սմ։ Այսպիսով, մինչդեռ կորիզի երկարությունը համարյա երկու անգամ ավելի է, քան լայնությունը, պտղի երկարությունը համարյա հավասար է լայնությանը։

Տանձաձև հոն (նկ. 3). — Աճում է Նորքի բարձունքի հարթավայրում, դյուղի մեջ։ Կա ութ ծառ։ Ծառերի բարձրությունը հասնում է 2,5—4 մ, պսակի լայնությունը՝ 2—4 մ։ Կան ծառեր, որոնք ունեն մեկից ավելի բուն։ Բունը և ճյուղերը դորշ մոխրագույն են։ Բնի բարձրությունը հասնում է 80 սմ, տրամագիծը՝ 10—20 սմ։ Պսակը բաժակաձև է. նույն տար-

վա անող ճյուղերը կանաչ գույնի են։ Պտուղը պտղակոթի կողմից դեպի գագաթը ¹/₄ մասով պտղի ամենահաստ տեղն է, որից սկսած բարակում են և վերջանում հարթ գագաթով. իսկ դեպի կոթունը աստիճանաբար բարակում է։ Լրիվ ֆիզիոլոգիական հասունացման ժամանակ կարմիր գույնի է լինում. Երկարությունը՝ 2,32 սմ, *լայնությունը՝ 1,59* սմ. *միջին կշիռը՝ 2,7* գր, *որից կորիզը՝ 0,59* գր։ *Կորիզի գագաթի կողմը բութ է, իսկ կոթի կողմը սրացած։ Չոր նյութը կազմում է 19,79 %, ընդհանուր շաքարը՝ 11,01 %, խնձորաթթուն՝ 2,7 %։*



Նկ. 4. Գլանաձև հոնի

Գլանաձև հոն *(Նկ. 4).—Հայտնաբերված է միայն մեկ ծառ, որը գտնըվում է Նորքի բարձունքի հյուսիս-արևմտյան թեքության ժայռի վրա։ Ծառի բարձրությունը 3* մ *է, պսակը՝ ցրված բաժակաձև։ Բնի բարձրությունը հողի մակերեսից 10* սմ *է, 30 սանտիմետր տրամագծով, որից ճյուղավորված են մի քանի հաստ, իրար հետ խճճված գորշագույն ճյուղեր։ Նույն տարվա անող ճյուղերը կանաչ են, տերևները լայն, երկար և բարակ ծայրով։ Պտուղը գլանաձև է, երկարությունը 2,26* սմ, *լայնությունը՝ 1,3* սմ։ *Գագաթի հիմքի մոտ միանգամից սկսում է նեղանալ. գույնը կարմիր է։*

Մեկ պտղի միջին կշիռը 2,11 գր *է, որից կորիզը՝ 0,3* գր։ *Կորիզը նույնպես երկարավուն-գլանաձև է. երկարությունը 2,53* սմ *է, լայնությունը՝ 0,5* սմ։ *Գագաթի կողմը քիչ բութ է, կոթի կողմը՝ սուր։ Պտղի մեջ չոր նյութը կազմում է 19,7 %, ընդհանուր շաքարը 9,8 %, խնձորաթթուն՝ 2,69 %։*

Ձվաձև հոն *(Նկար 5).—Աճում է Նորքի բարձունքի հյուսիսային թեքության լանջի վրա։ Երևանի հոների մեծ մասն այս տեսակից է։ Ծառի բարձրությունը 4* մ *է, պսակը բաժակաձև, բունը 15* սմ *հաստությամբ և 80* սմ *բարձրությամբ։ Բնի գույնը գորշ է, նույն տարվա անող ճյուղերը կանաչ են։ Պտղի գագաթի կողմը լայն և հարթ է. գագաթից դեպի կոթը բարակում և երբեմն փոքրիկ փոսիկով միանում է պտղակոթի հետ։ Լրիվ ֆիզիոլոգիական հասունացման ժամանակ պտուղը կարմիր է, երկարությունը 1,85* սմ *է, լայնությունը՝ 1,33* սմ, *միջին կշիռը 2,12* գր, *որից կորիզը՝ 0,33* գր։ *Պտղի նյութը կազմում է 17,28 %, ընդհանուր շաքարը*

6,97 %, խնձորաթթուն 3,11 %, կորիզի երկարությունը 1,33 սմ է, լայնությունը 0,51 սմ. գագաթի կողմը բութ է, կոթի կողմը քիչ սրված։



Նկ. 5. Զվարճ հոն։



Նկ. 6. Շշաձև հոն։

Շշաձև հոն (նկար 6).— Նորքի ձորում հայտնաբերված է երեք պտղատու ծառ։ Բերված են Ղրիմից, մոտ 50 տարի առաջ։ Ծառի բարձրությունը 2 մ է, պսակը կոնաձև, 1,5 մ լայնությամբ։ Ծառը հոդից բարձրանում է մեկ բնով, որի բարձրությունը 30—40 սանտիմետր է։ Կեղևը մոխրագույն կամ դարշագույն է, նույն տարվա ճյուղ շիվերը կանաչ։ Ծաղկաբույլի բողբոջները խոշոր են։ Պտուղը խոշոր է։ Պտղագագաթը հարթ է. ամենամեծ լայնությունը պտղի 1/3 մասում է, որտեղից սկսում է բարակել դեպի կոթի կողմը, մինչև պտղի 2/3 մասը, հետո սկսում է նեղանալ և կազմում է

Աղյուսակ 2

Հայաստանի մի քանի շրջանների հողերի քիմիական անալիզի արդյունքները*)

N հ/հ	ՏԵՂԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՐՆԵՐԸ	Գազի կորուստ գրամներով	Գազի մասնիկներ %	Կորիզի կշիռ գրամներ	Ջուր նյութի բանաձև	Ընդհանուր շարաբար %	Բիտումներ %	Ֆոսֆորաթթու %
1	2	3	4	5	6	7	8	9
1	Նոյեմբերյան—ծիրանի 1	2,26	87,25	0,20	21,14	11,28	3,39	55,46
2	Նոյեմբերյան—ծիրանի 2	1,84	89,1	0,20	18,26	10,32	2,99	65,02
3	Նոյեմբերյան—մրաշկուղ 1	1,97	86,3	0,27	17,22	9,72	2,78	61,44
4	Նոյեմբերյան—մրաշկուղ 2	2,06	86,6	0,28	19,47	18,08	3,10	59,71
5	Իջևանի	2,78	84,17	0,44	15,01	5,40	1,05	52,8
6	Նամշադինի 1	2,41	85,47	0,35	16,15	7,88	2,21	51,2
7	Նամշադինի 2	2,67	86,13	0,27	14,47	7,98	1,73	59,7
8	Նամշադինի 3	2,07	82,12	0,36	16,48	7,96	2,28	61,4
9	Նամշադինի 4	1,64	84,20	0,26	15,85	7,60	2,21	55,4
10	Մեղրի	2,64	88,99	0,29	15,78	5,70	2,07	46,6
11	Տակառան	1,83	82,07	0,28	16,93	8,04	2,63	—
12	Տանձատ	2,7	81,53	0,34	19,79	11,01	2,7	—
13	Գյանձակ	2,11	87,31	0,3	19,7	9,8	2,68	
14	Զիման	2,12	87,00	0,33	17,28	6,97	3,31	—
15	Շրան	5,39	87,40	0,58	21,71	8,16	3,49	—

լայն վիճակ, որը միանում է պոդզոլների հիմքում և կազմում է մսային ուռուցիկ էրիվ ֆիզիոլոգիական հասունացման ժամանակ պտուղը կարմիր է. երկարությունը 3,2 սմ է, լայնությունը՝ 1,7 սմ. միջին կշիռը 5,39 գր է, որից կորիզը՝ 0,58 գր։ Կորիզի երկարությունը 1,8 սմ է, լայնությունը՝ 0,73 սմ։ Կորիզի ղլիի կողմը բութ է, կոթի կողմն ունի ուժեղ սրված։ Գազի չոր նյութը 21,71 %է. ընդհանուր շարարը՝ 8,16 %։ ինձորաթթուն՝ 3,49 %։

Երևանի շրջակայքի հողերը իրենց քիմիական բարձր ցուցանիշներով հետ չեն մնում Նոյեմբերյանի, Նամշադինի, Իջևանի, Մեղրու շրջանների հողերից, որը երևում է 2-րդ աղյուսակում բերված տվյալներից։

Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել հողի վրա և լայնորեն տարածել նրան նաև Արարատյան դաշտավայրում, մտցնելով պտուղների տատրտիմենտի մեջ։ Հարկավոր է մշակել հողի ագրոտեխնիկան և բարձր ագրոտեխնիկայի պայմաններում մշակելով աղնվացնել նրան։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի
Բույսերի Դենեսիկայի և Սելեկցիայի Ինստիտուտ

*) Քիմիական անալիզը կատարվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գաղտնիության Ինստիտուտի բիոքիմիական լաբորատորիայում, գիտությունների թեկնածու Սուրեն Մինասյանի ղեկավարությամբ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Г. Х. Буниатян, Г. Д. Ярошенко, М. Г. Гиспарян*—Содержание витамина С в некоторых дикорастущих растениях Арм. ССР. Изв. Арм. ФАН СССР. № 7 (21), 18, 1942.
2. *А. А. Гроссгейм*—Дикие съедобные растения Кавказа. Изд. Аз.ФАН, Баку, 1942.
3. *Я. А. Медведев*—Деревья и кустарники Кавказа. Тифлис, 1919.
4. *В. И. Слободяник*—Кизил. Сад и огород, № 8—9, 1946.
5. *Р. [illegible]*—Руководство по систематике растений. Москва, 1912.
6. *Г. В. Трусевич*—Дикорастущие плодовые Азово-Черноморского Края и их использование. Азчериздательство, 1936.
7. *Ф. В. Церевитинов*—Химия свежих плодов и овощей. Сельхозгиз. Москва, 1933.
8. *Н. З. Умиков*—Врачебное применение плодов, ягод и овощей с древнейших времен. Тбилиси, 1947.
9. *Н. Д. Уничев*—Дикорастущий кизил в Дагестане и его использование. АН СССР-Дагестанская научно-исследовательская база. Тр. первой научной сессии 8—11 октября 1947.

А. К. Нароян

Характеристика кизила, распространенного в окрестностях Еревана

Резюме

Кизил является хорошим сырьем для консервной промышленности и имеет народнохозяйственное значение.

В Армении он распространен в основном в Горисском, Иджеванском, Кафанском, Алавердском, Шамшадинском, Ноемберянском районах, в незначительном количестве встречается в Дилижанском, Кироваканском, Аштаракском районах и в окрестностях гор. Еревана.

Кизил по количеству деревьев составляет 0,8% плодовых Армении, в указанных основных же районах возделывания от 16 до 32% плодовых.

Анализы плодов кизила Армении показали высокое содержание сахара, витаминов, хорошую плотность.

В окрестностях Еревана встречаются разновидности кизила: с бочкообразными, грушевидными, яйцевидными, округлыми плодами, имеющими также высокие показатели. Однако, культуре кизила в Армении не уделяется должного внимания. Необходимо изучить имеющиеся у нас разновидности кизила, разработать его агротехнику и включить его в сортимент плодовых Армении, а также широко использовать его при посадке полезащитных лесных полос.